

## ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՈՐԱԿՅԱԼ ԴՈՆՈՐԱԿԱՆ ԱՐՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Սաթիբալդիևա Ա.<sup>1</sup>, Կարաբան Բ.<sup>1</sup>, Մերկ Գ.<sup>2</sup>, Վեսել-Էլերման Ս.<sup>2</sup>,  
Օսմոնովա Ա.<sup>3</sup>, Նազարեթյան Մ.<sup>4</sup>

<sup>1</sup>Կիրգիզիայի առողջապահության նախարարության արյան հանրապետական կենտրոն, Բիշկեկ, Ղըրղզստան

<sup>2</sup>EPOS Health Management, Բադ Չամբուրգ, Գերմանիա

<sup>3</sup>EPOS Health Management, Բիշկեկ, Ղըրղզստան

<sup>4</sup>EPOS Health Management, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 12/12/2013թ., ընդունված է՝ 30/01/2014թ.

Դոնորական արյան անվտանգության և որակի նախադրյալներից մեկը համապատասխան մասնագետների ուսուցումն է: Այդ կապակցությամբ 2011-ից, գերմանական «EPOS Health Management» ընկերության կողմից և «Գերմանական զարգացման բանկ»-ի ֆինանսական աջակցության շնորհիվ, Բիշկեկ քաղաքում (Կիրգիզիա) անց է կացվել հատուկ կրթական ծրագիր՝ «Անվտանգ և որակյալ դոնորական արյուն» թեմայով:

Այս ուսուցումը խիստ կարևոր է, քանի որ ապահովում է առողջապահական ծրագրերի զարգացումը, արյան փոխներարկման որակի բարձրացումը և արյան միջոցով վիրուսային ինֆեկցիաների (հեպատիտներ, ՁԻԱՅ, սիֆիլիս) և այլ ինֆեկցիաների փոխանցման ռիսկի նվազեցումը:

2012-2013 թթ-ին, անց է կացվել 3 ուսումնական դասընթաց, որոնց հիմնական ուղղվածությունն եղել է արյան ծառայության աշխատողների գիտելիքների և ունակությունների զարգացումը, ինչպես նաև արյան դոնորների հավաքագրման, դոնորական արյան պատրաստման, դրա հետազոտման, պահպանման և առաքման գործընթացները: Ծրագրի կարևորագույն թիրախներից մեկը հանդիսացել է գործունեության որակի բարելավումը և համապատասխան ուսումնական նյութերի պատրաստումը: Բոլոր երեք դասընթացի ուսումնական ծավալը կազմել է 176 ժամ:

Ուսուցումն իրագործվել է «EPOS Health Management» կազմակերպության միջազգային փորձագետների կողմից, տեղի արյան ծառայության մասնագետների հետ համատեղ: Ուսումնական նյութերը տպագրվել են, ինչպես նաև առկա են տեսասկավառակի վրա:

Մասնագետներն ուսուցման ավարտին ձեռք են բերել անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ, ծանոթացել են գործողությունների վերլուծման, արդյունավետ հաղորդակցման և այլ կառավարչական ունակություններին:

Արդյունքում, տվյալ ուսումնական ծրագիրը թույլ է տվել վերապատրաստել արյան ծառայության մասնագետների մի խումբ, որը ոչ միայն ձեռք է բերել գիտելիքներ և տեղեկատվություն, նաև ուսուցման և գիտելիքների փոխանցման ունակություններ: